քարոզիչ մը խրկուած է գիւղերուն ցանկը պատրաստելու. չատերը ատկից հասկցան անծանօթ մնացողներուն մահը։ Զէ՛, Ատանայի ցաւը ընդհանուր է. մոռնալիք բան չէ։

ԱՌԱՊԱՐ

# Քաղաքական Բաժին

**ՖՐԱՆՍԱ**

(Իր արտաքին քաղաքականութիւնը)

Յայտարարութիւնները զոր Պ. Բիչօն ըրած է Նոյն Վիներ Թակպլաթի մէջ, Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան սկզբունքները և հայեացքները կ'ամփոփեն։ 1870ի սոսկալի տարիէն ի վեր քառասուն տարի անցած է և երբեք հանրապետութեան ուղեգիծը, ազգային շահէն և արժանապատուութեան զգացումէն ներշնչուած, փոփոխութիւն կրած չէ։ Երրորդ հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը կատարեալ հերքում մը եղած է բոլոր այն յառաջեղներուն որոնք կը կարծէին թէ Ֆրանսայի ռամկավարական վարիչները անընդունակ են ունեակեան և յարատեւող գործունէութեան

…

առջ, որպէս կը պահանջէ ժիւռղի կուսակցութիւնը։ Վերջապէս նախարարապետ Վէքէրլէ, առանց կարեւորութիւն տալու այն ընդհատումներուն ու աղմուկներուն որոնք կ'ընկերանային իր նախադասութեանց գրեթէ իւրաքանչիւրին, պարզեց այն պատճառները, որոնք հիմնականապէս անկարելի կը դարձնէին Հունգարական անկախ Դրամատան մը հաստատումը։ Ոչ միայն Թագաւոր-կայսրը, իր վէթօյի իրաւունքը գործադրելով, հաստատապէս ընդդիմացած է, այլ նաեւ տնտեսական և ելեւմտական լուրջ պատճառներ չեն թոյլատրեր զայն։

Ա. Ճ.

---

# ԿՈՄՍ ՄՈՆԹԷ-ՔՐԻՍԹՕ

## Ա. ՏԻՒՄԱՅԻ

### ՀՌՉԱԿԱՒՈՐ ՎԷՊԸ

կարդացէք այսօրուան Արեւելքի մէջ։

---

# ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

## ՀՐԱԺԱՐՈՒՄ

## ՀԻԼՄԻ ՓԱՇԱՅԻ ԴԱՀԼԻՃԻՆ

### ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԻՆԿԱՒ ԴԱՀԼԻՃԸ

### ՈՎ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏԸ

Վերջապէ՛ս ինկաւ Հիւսէյին Հիլմի փաշայի Դահլիճը, երկար վարանումներէ և տատանումներէ յետոյ։ Եպարքոսը տեղի տուաւ Մ. և Ց. կուսակցութեան առջև,

…

